Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ի Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի ղեկավարի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N3550 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 239 – թիվ 245 որոշումների վերաբերյալ.

ՈՒսումնասիրությամբ պարզվել է, որ որոշումների մեջ օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսակետից առկա են հետևյալ թերությունները՝

1. Թիվ 239-Ա որոշման բովանդակությունը չի համապատասխանում որոշման վերնագրին։
2. Թիվ 341-Ա որոշման դրույթների համարակալումը սխալ է կատարված, բացի այդ որոշման բովանդակությունը կիսատ է գրառված։
3. Թիվ 343-Ա որոշման՝
   1) վերնագիրը շարադրված է անհիմն ու անտեղի կրկնությամբ,
   2) որոշման համարակալումը սխալ է կատարված,
   3) որոշումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի պահանջներին,
   4) Որոշման անբաժանելի մաս համարվող հավելվածների վավերապայմանները թերի են գրառված։
4. Թիվ 344-Ն որոշման դրույթների համարակալումը սխալ է կատարված։

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 3550 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի հերթական նիստի թիվ 343-Ա որոշման վերաբերյալ.

Թիվ 343-Ա որոշման վերնագիրը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված նորմին՝ այն է նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ նախատեսող իրավական ակտի վերնագրում բերվում է միայն փոփոխվող իրավական ակտի կրճատ անվանումը:

Թիվ 343-Ա որոշման վերնագիրը խմբագրել հետևյալ բովանդակությամբ.
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 227-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»:

Թիվ 343-Ա որոշման 2-րդ կետի բովանդակությունից հանել «Հաստատել» բառը, իսկ «հավելվածները՝ նոր խմբագրությամբ:» բառերը փոխարինել «հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1, թիվ 2 թիվ 3 հավելվածների:» բառերով: Բացի այդ որոշմամբ հաստատված փոփոխությունները ամրագրված չեն անբաժանելի մաս համարվող հավելվածների ձևով: Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 9-րդ մասի՝ նորմատիվ իրավական ակտով հաստատվող կանոնները, կանոնադրությունները, կարգերը, ցանկերը, աղյուսակները և այլն ամրագրվում են (կամ ձևակերպվում են) նորմատիվ իրավական ակտի անբաժանելի մաս համարվող հավելվածների ձևով: Հավելվածներն առանց տվյալ նորմատիվ իրավական ակտի իրավաբանական ուժ չունեն: Նորմատիվ իրավական ակտի համապատասխան մասերը հղում են պարունակում այդ հավելվածներին:

Թիվ 343-Ա որոշման թիվ 14, 15, 32 հավելվածների վերնագրերը խմբագրել հետևյալ բովանդակությամբ.

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Արթիկ համայնքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի 28-ի N 343-Ա որոշման

«Հավելված 14
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Արթիկ համայնքի ավագանու
2022 թվականի նոյեմբերի 28-ի N 227-Ա որոշման»

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Արթիկ համայնքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի 28-ի N 343-Ա որոշման

«Հավելված 15
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Արթիկ համայնքի ավագանու
2022 թվականի նոյեմբերի 28-ի N 227-Ա որոշման»
Հավելված 3
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Արթիկ համայնքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի 28-ի N 343-Ա որոշման
«Հավելված 32
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Արթիկ համայնքի ավագանու
2022 թվականի նոյեմբերի 28-ի N 227-Ա որոշման»

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի հերթական նիստի թիվ, թիվ 344-Ն և 345-Ա որոշումների վերաբերյալ առարկություններ չունենք:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝

Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

10.01.2023թ.
Կատարող՝ Ա. Հարությունյան